# 021801.01.6 «ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

«Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտության շրջանավարտները ստանում են արվեստի տեսության և պատմության բակալավրի որակավորում:

Բակալավրիատի ուսման տևողությունը չորս տարի է:

«Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» մասնագիտությամբ կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, գիտելիքներ ընդհանուր արվեստի պատմությունից:

Դիմորդները ընդունելության քննություն են հանձնում մեկ մրցութային առարկայից.

1. «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր:

Մասնագիտական քննությանը ներկայացվող պահանջներն են.

Պարզել դիմորդի գիտելիքները արվեստի պատմության հիմնական ժամանակաշրջանների մասին. նախնադարյան արվեստ, հին աշխարհի արվեստ (Հին Եգիպտոս, Հռոմ, Միջագետք, Հունաստան), հելլենիստական ժամանակաշրջանի արվեստ, միջնադար, վերածննդի արվեստ, նոր դարաշրջանի արվեստ, նորագույն շրջանի արվեստ և իմացություն գեղարվեստական հոսանքների մասին:

Ընդհանուր արվեստի պատմության առարկայի վերաբերյալ հարցերը լուսաբանված են ներքոնշյալ գրականության մեջ.


1. Ա.Աղասյան, Հր.Հակոբյան, Վ.Ղազարյան, Մ.Հասրաթյան, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009:
2. «Արտասահմանյան արվեստի պատմություն», Երևան, 2003, Կուզմինա և Մալցևա (Մ.Երզնկյանի թարգմանությամբ):
3. Գ. Մելքումյան, <<Մշակութաբանություն>>, (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2001:
4. Новикова Г. Н., Технологии арт-менеджмента, Учеб. пособие,-М.: МГУКИ, 2006.

## «ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**քննություն** - «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր

Մասնագիտական քննությունը կազմակերպվում է բանավոր քննության ընթացակարգով:

Դիմորդի քննատոմսը պարունակում է ընդհանուր արվեստի պատմությանը վերաբերող չորս հարց՝ ըստ ներքոնշյալ գնահատման չափանիշների.

1. Պատկերացում արվեստի պատմության հիմնական փուլերի մասին, վերջիններիս բնութագրումը — 0-5 միավոր
2. Իմացություն հայ և համաշխարհային արվեստի նշանավոր դեմքերի մասին — 0-5 միավոր
3. Գիտելիքներ հայ միջնադարյան արվեստի մասին — 0-5 միավոր
4. Գիտելիքներ արվեստի ստեղծագործությունների մասին — 0-5 միավոր

Ընդամենը 20 միավոր

«ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

քննություն - «Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր:
Քննությունը կազմակերպվում է հարցատոմսերով, բանավոր քննության ընթացակարգով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### Հարցաշար

1. Նախնադարյան հասարակության արվեստը: Ժայռապատկերներ, մեգալիթյան կառույցներ
2. Եգիպտոս: Հին թագավորության շրջանի արվեստը (մաստաբաներ, բուրգեր, սֆինքսներ)
3. Միջին և Նոր թագավորությունների արվեստը
4. Միջագետքի մշակույթի զարգացման փուլերը. շումերական, աքքադական, ասորաբաբելական արվեստ
5. Միջագետքի շինարարական արվեստը
6. Արարատյան թագավորության /Ուրարտու/ մշակույթը /մ.թ.ա. 9-6-րդ դդ./
7. Ուրարտական պալատաշինությունը, ամրոցները, քաղաքները /Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Էրեբունի/
8. Ուրարտական կերպարվեստ, որմնանկար, խեցեգործություն, մետաղագործություն, քանդակ
9. Հունական մշակույթի զարգացման փուլերը
10. Կրետեմիկենյան արվեստ /մ.թ.ա. 3-2-րդ դդ./
11. Հոմերոսյան և արխաիկ շրջանները հունական արվեստում /մ.թ.ա 8-6-րդ դդ./
12. Դասական փուլ. Ակրոպոլիսի համալիրը, դասական քանդակի բնորոշող հատկանիշները /մ.թ.ա. 5-րդ դ./
13. Հունական դասական թատրոնի ձևավորումն ու զարգացումը
14. Հելլենիզմի շրջան. սահմանում, ճարտարապետություն, քանդակ
15. Հելլենիզմը Հայաստանում. բնորոշում, թատրոնի զարգացումը, ճարտարապետական և քանդակագործական հորինվածքները
16. Հելլենիստական քաղաքները Հայաստանում
17. Հին Հռոմի մշակույթը
18. Հին Հռոմի գլխավոր ճարտարապետական հուշարձանները
19. Հռոմեական դիմաքանդակ

20. Քրիստոնեությունը որպես միջնադարյան մշակույթի հիմք
21. Բյուզանդական արվեստ
22. Բյուզանդական ճարտարապետությունը և մոնումենտալ արվեստը
23. Ռուսական սրբապատկերների ճանաչված վարպետները /Ֆիոֆան Գրեկ, Անդրեյ Ռուբլյով/
24. Արևմտաեվրոպական միջնադարյան արվեստի փուլերը. ռոմանական, գոթական
25. Վերածննդի դարաշրջանի բարոյագեղագիտական պատկերացումները
26. Իտալական վերածննդի փուլերը
27. Հյուսիսային եվրոպայի վերածնունդը /Նիդեռլանդներ, Գերմանիա/
28. 17-րդ դարի եվրոպական արվեստի ընդհանուր բնութագիրը
29. Լուսավորության դարաշրջանը արվեստում /18-րդ դար/ Օնորե Ֆրագոնար, Անտուան Վատտո, Ֆրանսուա Բուշե, Ժան-Բատիստ Գրյոզ/
30. 19-րդ դարի արվեստի միտումները
31. Քրիստոնեական արվեստի սկզբնավորումը Հայաստանում
32. Միջնադարյան ճարտարապետական հորինվածքները /Էջմիածնի Մայր տաճար, Հռիփսիմե, Զվարթնոց/
33. Միջնադարյան որմնանկարչությունը /Լմբատավանք, Առուճ, Թալին/
34. Հայաստանի վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները
35. Միջնադարյան որմնանկարչությունը 10–13-րդ դդ. /Ախթամար, Կոբայր, Տաթև, Աղթալա/
36. Խաչքարը որպես կերպարվեստի յուրահատուկ տեսակ
37. Միջնադարյան վանական համալիրները /Հաղպատ, Սանահին, Գեղարդ, Տաթև/
38. Զարգացած միջնադարի ճարտարապետությունը /Անի քաղաքի եկեղեցական կառույցները ու պարիսպները/
39. Անիի Մայր տաճարը, Հովվի եկեղեցին, Փրկչի եկեղեցին
40. Անիի Ս.Գրիգոր եկեղեցին /Գագկաշեն/, Տիգրան Հոնենցի եկեղեցու որմնանկարները
41. Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գեղարվեստական հարդարանքը
42. Միջնադարյան մանրանկարչական դպրոցները
43. Անիի մանրանկարչական դպրոցը
44. Կիլիկյան մանրանկարչության դպրոցը. Թորոս Ռոսլին
45. Կիլիկյան մանրանկարչության դպրոցը. Սարգիս Պիծակ
46. Գլաձորի մանրանկարչական դպրոցը (13–14-րդ դդ.)
47. Վասպուրականի մանրանկարչությունը (14–15-րդ դդ.)
48. Նորավանքի եկեղեցիները. հարթաքանդակները
49. Տաթևի վանահամալիրը, որմնանկարները

50. Գեղարդի վանքային համալիրը
51. Հաղպատի ու Սանահինի վանահամալիրները
52. Հայ միջնադարյան պատմագրություն. Մովսես Խորենացի (V դար), Ագաթանգեղոս (V դար), Փավստոս Բուզանդ (V դար)
53. Խորհրդային շրջանի հայ արվեստը
54. Հայկական միջնադարյան գրքարվեստը. Ձեռագրատներ
55. Նորադուզի և Ջուղայի խաչքարերը
56. Էջմիածնի 10-րդ դարի ավետարանը
57. Հաղպատի ավետարանը
58. Միջնադարյան հայ ճարտարապետները. Մոմիկ, Տրդատ, Մանուել
59. Միջնադարյան առակագիրները. Վարդան Այգեկցի /13-րդ դար/, Մխիթար Գոշ /13-րդ դար/
60. Սփյուռքահայ արվեստը
61. Հովնաթանյան նկարչական տոհմը
62. Ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկի /1817-1900/
63. Պատմանկարիչ Վարդգես Սուրենյանց /1860-1921/
64. Եղիշե Թադևոսյանի կյանքն ու ստեղծագործական ուղին /1870-1936/
65. Հայ կերպարվեստի նահապետ՝ Մարտիրոս Սարյան /1880-1972/
66. Գեորգի Յակուլովի արվեստը /1884-1928/
67. Երվանդ Քոչարի նորարարական մոտեցումները /1899-1979/
68. Ամերիկյան աբստրակցիոնիզմի ներկայացուցիչ. Արշիլ Գորկի /1904-1948/
69. Սերգեյ Փարաջանովի կոլաժները /1924-1990/
70. Հայ մեծանուն երգահան՝ Կոմիտաս /1869-1935/
71. Արամ Խաչատրյանի /1903-1978/ բալետները
72. Ալեքսանդր Թամանյանի /1878-1936/ ճարտարապետական կառույցները
73. Երաժիշտ՝ Շառլ Ազնավուր /1924-2018/
74. 20-րդ դարի նշանավոր հայ քանդակագործները /Անդրեաս Տեր-Մարուքյան, Արա Սարգսյան, Երվանդ Ոսկան, Արա Հարությունյան, Սերգեյ Մերկուրով/
75. 20-րդ դարի հայ բեմարվեստի վարպետները /Վահրամ Փափազյան, Պետրոս Ադամյան, Հասմիկ/
76. Ամերիկահայ գրող՝ Վիլյամ Սարոյան /1908-1981/
77. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Լեոնարդո դա Վինչի /1452-1519/
78. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Միքելանջելո Բուոնարոտտի /1475-1564/
79. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Սանդրո Բոտիչելլի /1445-1510/
80. Վերածննդի խոշորագույն վարպետ՝ Ռաֆայել Սանտի /1483-1520/

81. Ռեմբրանդ վան Ռեյնի ստեղծագործությունները /1606-1669/
82. Համաշխարհային ճանաչում գտած կոմպոզիտորները /Մոցարտ, Բեթհովեն, Շոպեն/
83. Իմպրեսիոնիզմի և պոստիմպրեսիոնիզմի խոշորագույն վարպետները / Կլոդ Մոնե, Օգյուստ Ռենուար, Էդգար Դեգա, Վինսենտ վան Գոգ, Պոլ Գոգեն/
84. 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի եվրոպական նշանավոր նկարիչները /Պաբլո Պիկասսո, Անրի Մատիս, Վասիլի Կանդինսկի/
85. Նորագույն շրջանի հայ կերպարվեստի նշանավոր դեմքերը /Էդուարդ Իսաբեկյան, Մինաս Ավետիսյան, Գրիգոր Խանջյան/
86. Պերեդվիժնիկների շարժումը ռուս արվեստում
87. Նկարիչ Իլյա Ռեպին /1844-1930/
88. Նկարիչ Վալենտին Սերով /1865-1911/
89. 19-րդ դարի ռուս նկարիչներ Իվան Շիշկին /1832-1898/, Իսահակ Լևիտան /1860-1900/
90. Ավանգարդ արվեստ. Կազիմիր Մալևիչ /1879-1935/, Վասիլի Կանդիսկի/1866-1944/, Մարկ Շագալ /1887-1985/
91. Գառնիի հեթանոսական տաճարը և նրա բաղնիքի խճանկարը
92. Երևան քաղաքի մոնումենտալ արձանները
93. Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» կտավը
94. Մարտիրոս Սարյանի դիմանկարները
95. Հակոբ Կոջոյանի գրքի գրաֆիկան
96. Խորհրդային շրջանի հայ կինոմատոգրաֆիան
97. Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» և «Վարդան Մամիկոնյան» ձիարձանները
98. Հայ ծովանկարիչների ստեղծագործությունները
99. Պատմական ժանրի ստեղծագործությունները հայ կերպարվեստում
100. Խորհրդային շրջանի հայ ճարտարապետները և նրանց ստեղծագործությունները
101. Հայ իմպրեսիոնիստ նկարիչների ստեղծագործությունները. Եղիշե Թադևոսյան, Վահրամ Գայֆեճյան
102. Իլյա Ռեպինի «Նավաքարշերը Վոլգայի վրա» կտավը
103. Ռուս պատմանկարիչ Վասիլի Սուրիկովի ստեղծագործությունները
104. Եգիպտոսի Նոր թագավորության շրջանի Նեֆերտիտիի դիմաքանդակը
105. Միքելանջելո Բուոնարոտտիի «Դավթի» քանդակը
106. Միքելանջելո Բուոնարոտիի «Ողբ առ Քրիստոսի / Պիետա /» քանդակը
107. Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա» նկարը
108. Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարը
109. Ռաֆայել Սանտիի «Սիքստինյան Տիրամայրը» կտավը
110. Սանդրո Բոտիչելլիի «Վեներայի ծնունդը» աշխատանքը

111. Իմպրեսիոնիստական կերպարվեստի ստեղծագործությունների վերլուծություն
112. Սալվադոր Դալիի սյուրռեալիստական գործերը
113. Օգյուստ Ռոդենի «Մտածողը» քանդակը
114. Վինսենթ վան Գոգի ստեղծագործությունները
115. Գուստավ Կլիմտի «Համբույր» աշխատանքը
116. Արշիլ Գորկիի «Մայրն ու որդին» ստեղծագործությունը
117. Ռեմբրանդի «Անառակ որդու վերադարձը» նկարը
118. Ռեմբրանդի դիմանկարչական աշխատանքները
119. Մաշտոցի անվան մատենադարանի քանդակները
120. Անդրեյ Ռուբլովի «Սուրբ Երրորդություն» սրբապատկերը